ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 21.07.2014թ.

Ո Ր Ո Շ Ու Մ

ԳԲԽ-24/14 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-24/14 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով Ա/Ձ Հասմիկ Օհանյանի կողմից 30.06.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-24/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. Ա/Ձ Հասմիկ Օհանյանի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ նաև Կենտրոն) ներկայացված բողոքով Ա/Ձ Հասմիկ Օհանյանը (այսուհետ՝ նաև Բողոքաբեր) հայտնել է, որ պատվիրատուի գնահատող հանձնաժողովի գործողությունների արդյունքում խախտվել են Ա/Ձ Հասմիկ Օհանյանի իրավունքները և գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը: Գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողությունները սահմանափակել են գնման ընթացակարգին Բողոքաբերի լիարժեք մասնակցությունը և պետական գնումների գործընթացներում հետագա մրցակցային քաղաքականության մշակումը:

Ա/Ձ Հասմիկ Օհանյանը տեղեկացրել է, որ նրա լիազորված անձը՝ Հրաչյա Գալոյանը, «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-40/14» ծածկագրով բաց ընթացակարգի հայտը պատվիրատուի քարտուղարին է հանձնել 23.06.2014թ. ժամը 10:20-ի սահմաններում՝ անցագրային կետում:

Տվյալ պահին քարտուղարի կողմից որևէ գրառում գրանցամատյանում չի կատարվել: Բողոքաբերը նշում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասը նախատեսվում է հայտերի բացման նիստին մասնակցի ներկայությունը: Հաշվի առնելով պատվիրատուի մոտ անցագրային ռեժիմը՝ Բողոքաբերը անցագրային կետում սպասել է բացման նիստին, որը պետք է տեղի ունենար ժամը 11:00-ին: Սակայն ժամը 11:53-ի սահմաններում գնահատող հանձնաժողովի քարտուղարը հեռախոսազանգի միջոցով տեղեկացրել է, որ գնահատող հանձնաժողովն իրավազոր չէ և նիստը հետաձգվում է: Հաջորդ օրը՝ 24.06.2014թ. ժամը 13:49-ին, հանձնաժողովի քարտուղարը հեռախոսազանգի միջոցով Ա/Ձ Հասմիկ Օհանյանին տեղեկացրել է, որ բացման նիստը կայացել է, և Ա/Ձ Հասմիկ Օհանյանի կողմից ներկայացված հայտը մերժվել է, իսկ մերժման պատճառաբանությանը հնարավոր կլինի ծանոթանալ արձանագրությունից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված պահին՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» ենթակետով սահմանված է, որ ոչ ավելի, քան հինգ աշխատանքային օրով կասեցնում է գնման գործընթացը, իսկ «գ» ենթակետով՝ սահմանում է նիստի անցկացման օրը և ժամը, որոնք պետք է համընկնեն գնման ընթացակարգի կասեցման վերջին ժամկետին:

Բողոքաբերը գտնում է, որ հիմք ընդունելով կարգի պահանջները՝ բացման նիստի օր պետք է սահմանվեր 30.06.2014թ. ժամը 11:00-ն: Մինչդեռ 27.06.2014թ. ժամը 11:51-ին Բողոքաբերը էլեկտրոնային փոստով ստանում է նիստի արձանագրությունը, որում նշված է, որ նիստը կայացել է հրավերով սահմանված ժամին:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները՝ հայտերի բացման նիստի օրվան հաջորդող օրացուցային օրվա ընթացքում հայտերի բացման նիստի արձանագրության պատճենները տրամադրվում են այն մասնակիցներին, որոնք կամ որոնց ներկայացուցիչները չեն մասնակցել այդ նիստին: Բողոքաբերի պնդմամբ, նիստի արձանագրությունը վերջինիս ծանուցվել է չորս օր ուշացումով:

Բողոքը քննող հանձնաժողովին Ա/Ձ Հասմիկ Օհանյանը խնդրել է «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-40/14» ծածկագրով բաց ընթացակարգը հայտարարել չկայացած և կազմակերպել միասնական

կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով նոր գնման գործընթաց:

Բողոքաբերը 02.07.2014թ. Կենտրոնին ներկայացրած N 5249-2 գրությամբ հայտնել է, որ Հանձնաժողովի 23.06.2014թ. կայացած նիստի N 2 Արձանագրությամբ՝ Ա/Ձ Հասմիկ Օհանյանի կողմից ներկայացված հայտի մերժումը օրինաչափ է և խնդրել է իր կողմից 30.06.2014թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

2. **<u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 01.07.2014թ. N 04/032-1160 գրությամբ դիմել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին՝ խնդրելով կարծիք տալ Կենտրոնում 30.06.2014թ. Ա/Ձ Հասմիկ Օհանյանի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 04.07.2014թ. N 40-668 գրությամբ Ա/Ձ Հասմիկ Օհանյանի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-40/14» ծածկագրով գնման ընթացակարգը գնահատող հանձնաժողովի 27.06.2014թ. կայացած նիստի N 3 Արձանագրության 1-ին կետի համաձայն հայտարարվել է չկայացած՝ կից ներկայացնելով գնահատող հանձնաժողովի նշված արձանագրության պատճենը:

3. **<u>ԳԲԽ-24/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.</u>**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է Ա/Ձ Հասմիկ Օհանյանի կողմից 30.06.2014թ. Կենտրոնին ներկայացված բողոքը մերժել:

4. **<u>ԳԲԽ-24/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-24/14 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.</u>**

Հանձնաժողովն ուսումնասիրել է Ա/Ձ Հասմիկ Օհանյանի կողմից 30.06.2014թ. ներկայացված բողոքը, 02.07.2014թ. ներկայացված N 5249-2 գրությունը, գնահատող

հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 23.06.2014թ. և 27.06.2014թ. կայացած նիստերի համապատասխանաբար N 2 և N 3 արձանագրությունները, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին ներկայացրած 04.07.2014թ. N 40-668 գրությունը և «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար սողնակների, կափույրների և փականների ձեռքբերման նպատակով կազմակեպվել է «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-40/14» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Հանձնաժողովի 23.06.2014թ. կայացած նիստի N 2 Արձանագրության 1-ին կետի համաձայն՝ Ա/Ձ Հասմիկ Օհանյանի ներկայացրած հայտը մերժվել է ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 5-րդ կետի 5.1 ենթակետի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Ա/Ձ Հասմիկ Օհանյանը 30.06.2014թ. Կենտրոնին ներկայացրած բողոքով խնդրել է «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-40/14» ծածկագրով բաց ընթացակարգը հայտարարել չկայացած և կազմակերպել միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարկային և ոչ խտրական հիմունքներով նոր գնման գործընթաց:

Բողոքաբերը 02.07.2014թ. N 5249-2 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Հանձնաժողովի 23.06.2014թ. կայացած նիստի N 2 Արձանագրությամբ՝ Ա/Ձ Հասմիկ Օհանյանի կողմից ներկայացված հայտի մերժումը օրինաչափ է և խնդրել է իր կողմից 30.06.2014թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 04.07.2014թ. Կենտրոնին ներկայացրած N 40-668 գրությամբ հայտնել է, որ «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-40/14» ծածկագրով գնման ընթացակարգը, գնահատող հանձնաժողովի 27.06.2014թ. կայացած նիստում հայտարարվել է չկայացած՝ կից ներկայացնելով գնահատող հանձնաժողովի նշված արձանագրության պատճենը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Հասմիկ Օհանյանի կողմից 30.06.2014թ. բողոքով Կենտրոնին ներկայացված «ՀԱԷԿ-ԲԸԱՊՁԲ-40/14» ծածկագրով բաց ընթացակարգը չկայացած հայտարարելու և միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարկային և ոչ խտրական հիմունքներով նոր գնման գործընթաց կազմակերպելու մասին պահանջը բողոքի քննության ընթացքում դարձել է առարկայազուրկ,

քանի որ մինչև Գնումների բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունելը Պատվիրատուն կայացրել է որոշում գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին, ինչպես նաև հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը Գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Ա/Ձ Հասմիկ Օհանյանի կողմից 30.06.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը մերժել:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Ոսկանյան Լուսինե

Անդամ՝ Զոբանյան Ռոման